ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2016 թվականի N 1373 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 1521-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի «Ազատ տնտեսական գոտու կազմակերպչի ընտրության ու չափանիշների սահմանման, ազատ տնտեսական գոտում շահագործողների թույլտվության տրամադրման և դադարեցման, ինչպես նաև շահագործողի կողմից ներկայացված գործարար ծրագրին ներկայացվող պահանջներն ու գնահատման և ազատ տնտեսական գոտու սահմանագծին ներկայացվող տեխնիկական պահանջների կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի N 844 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ազատ տնտեսական գոտիների պետական քաղաքականության բնագավառում լիազոր պետական մարմին ճանաչելու մասին» N 1521-Ն որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 6-րդ կետում «Հանձնաժողովին» բառը փոխարինել «Լիազոր մարմին» բառերով.

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Լիազոր մարմինը հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն էլեկտրոնային եղանակով ուղարկում է հանձնաժողովի անդամներին: Հանձ-

նաժողովի անդամները հայտն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը՝ ելնելով կարգով սահմանված չափանիշներից, և ներկայացնում են հայտի վերաբերյալ գնահատական:».

3) կարգը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին, 7.2-րդ, 7.3-րդ, 7.4-րդ և 7.5-րդ կետերով.

«7.1. Հայտի վերաբերյալ գնահատականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:

7.2. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի անդամի կողմից հայտի վերաբերյալ գնահատական չներկայացվելու դեպքում հայտի գնահատման ժամանակ հանձնաժողովի տվյալ անդամի գնահատման արդյունքները հաշվի չեն առնվում:

7.3. Հանձնաժողովի նիստ գումարվում է հետևյալ դեպքերում՝

ա. եթե գնահատման արդյունքում հայտը չի բավարարել անցողիկ շեմը.

բ. եթե հայտը չի գնահատվել հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի կողմից, կամ հանձնաժողովի անդամի կողմից հանձնաժողովի նախագահին ներկայացվել է հիմնավորում դրա լրացուցիչ քննարկման անհրաժեշտության վերաբերյալ:

7.4. Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի նիստ է գումարում սույն կարգի 7.3-րդ կետով սահմանված հիմքեր առաջանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

7.5. Հանձնաժողովի գնահատած հայտը և համապատասխան եզրակացությունը լիազոր մարմնի կողմից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ քննարկման, ոչ ուշ, քան հայտն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:».

4) 8-րդ և 15.3-րդ կետերում «21 աշխատանքային օրվա» բառերը փոխարինել «15 աշխատանքային օրվա» բառերով.

5) 9-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Կազմակերպիչը պայմանագրի պատճենը տրամադրում է լիազոր մարմնին:».

6) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Պայմանագրի պատճենն ստանալուց հետո լիազոր մարմինը 2 աշխատանքային

օրվա ընթացքում հայտատուին է տրամադրում թույլտվության վկայական: Վկայականի ձևը սահմանվում է լիազոր մարմնի ղեկավարի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի համատեղ հրամանով:».

7) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Լիազոր մարմինը վարում է շահագործողներին տրված թույլտվության ռեեստր (այսուհետ՝ ռեեստր), որը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքում և նորացվում է յուրաքանչյուր նոր շահագործողին վկայական տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:».

8) կարգը 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով.

«12.1. Ռեեստրը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) ազատ տնտեսական գոտու շահագործողի անվանումը.

2) գրանցման համարը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության՝ տվյալ շահագործողին թույլ-տվություն տրամադրելու մասին համապատասխան որոշման համարը.

4) ազատ տնտեսական գոտում շահագործողի գործունեության իրականացման թույլտվության վկայականի պատճենը:».

9) 18-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) արտահանման ուղղություններ և ծավալներ.»,

բ. 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 29
Երևան

1373k.voroshum